Social Security

Ձեր իրավունքը հետաքննելու ձեր հարցապնդման վերաբերյալ ընդունված որոշումը

www.socialsecurity.gov

Ձեր իրավունքը հետաքննելու Ձեր հարցապնդման վերաբերյալ ընդունված որոշումը

Սոցիալական ապահովությունը ուզում է երաշխավորել, որպեսզի դուք ստանաք Սոցիալական ապահովության այն նպաստները, որոնց պահանջներին դուք բավարարում եք: Նախքան որոշում ընդունելը՝ նպաստների նկատմամբ ձեր իրավասության մասին կամ առ այն, թե ո՞ր նպաստները դուք կարող եք ստանալ, մենք ուշադիր ուսումնասիրում ենք բոլոր փաստերը: Մեր որոշման հետ համաձայն չլինելու դեպքում, դուք կարող եք բողոքարկել այն: Դա նշանակում է, որ դուք կարող եք խնդրել մեզ, որպեսզի մենք վերանայենք ձեր գործը: Ստանալով ձեր բողոքը, մենք քննարկում ենք որոշումն ամբողջությամբ, այլ ոչ միայն այն մասերը, որոնց հետ դուք համաձայն չեք: Եթե մեր որոշումը սխալ էր, մենք կփոփոխենք այն:

Գոյություն ունի բողոքարկման չորս մակարդակ: Եթե դուք բավարարված չեք մի մակարդակում ընդունված որոշմամբ, ապա դուք կարող եք բողոքարկել այն հաջորդին: Այդ մակարդակներն են.

- Վերաքննում.
- Լսում.
- Վերանայում Վերաքննիչ խորհրդի կողմից. ինչպես նաեւ
- Դաշնային դատարան:

Երբ բողոքարկել

Բողոք մուտքագրելիս, կարեւոր է հասկանալ, թե ինչ ժամկետներում դուք կարող եք ներկայացնել այն: Բողոք ներկայացնելու համար դուք ունեք 60 օր՝ մեր որոշումը պարունակող նամակը ստանալու ամսաթվից: Մենք ենթադրում ենք, որ դուք նամակը ստանում եք դրանում նշված ամսաթվից հետո հինգ օրվա ընթացքում՝ եթե դուք չկարողանաք ապացուցել մեզ, որ դուք այն ստացել եք ավելի ուշ:

Եթե 60-օրյա ժամկետում դուք չեք բողոքարկում, ապա դուք կարող եք կորցնել բողոքարկման ձեր իրավունքը եւ ընդունված վերջին որոշումը դառնում է վերջնական: Օրինակ, եթե դուք 60 օրվա ընթացքում չեք դիմում վերանայման խնդրանքով, ապա դուք կարող եք կորցնել ձեր գործը վերանայելու իրավունքը: Եթե դուք ունեք հարգելի պատճառ ձեր գործը 60-օրյա ժամկետում չբողոքարկելու համար, մենք կարող ենք ձեզ տրամադրել լրացուցիչ ժամանակ: Լրացուցիչ ժամանակի խնդրանքով դիմումը պետք է գրավոր ներակայացվի մեզ՝ նշելով հետաձգման պատճառը:

Երբ վերջնաժամկետի վերջին օրը ընկնում է շաբաթ, կիրակի կամ ազգային տոնի օրվա, ապա վերջնաժամկետը լրանում է հաջորդ աշխատանքային օրը:

Ինչպես բողոքարկել

Դուք պետք է գրավոր դիմեք բողոքարկման համար: Դուք կարող եք զանգահարել մեզ եւ խնդրել, որպեսզի ուղարկվի բողոքարկման ձեւաթուղթը կամ ուղարկել մեզ ստորագրված ծանուցում՝ ձեր Սոցիալական ապահովության համարով, նշելով, որ դուք ցանկանում եք բողոքարկել ձեր գործով որոշումը: Եթե դուք դիմել եք Սոցիալական ապահովության հաշմանդամության նպաստների կամ SSI-ի համար եւ ձեր դիմումը մերժվել է բժշկական պատճառներով, ապա դուք կարող եք բողոք ներկայացնել ձեր վեբ կայքում՝ ***www.socialsecurity.gov/disability/appeal***:

Ներկայացված լինելու ձեր իրավունքը

Դուք կարող եք նախընտրել, որպեսզի ինչ-որ մեկը օգնի ձեզ բողոքարկման հարցում կամ ներկայացնի ձեզ: Ձեր ներկայացուցիչը կարող է լինել փաստաբան կամ որակավորում ունեցող ցանկացած անձ, որը ծանոթ է ձեզ եւ Սոցիալական ապահովության ծրագրին: Մենք ձեր ներկայացուցչի հետ կաշխատենք այնպես, ինչպես կաշխատեինք ձեզ հետ: Նա կարող է հանդես գալ ձեր անունից Սոցիալական ապահովության հետ կապված հարցերի մեծամասնությում, ստանալով ձեր պահանջագրի հետ կապված բոլոր որոշումների պատճենները:

Ձեր ներկայացուցիչը չի կարող ձեզանից վճար գանձել կամ ստանալ՝ առանց մեզանից նախապես հավանություն ստանալը: Եթե ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն ներկայացուցիչ ունենալու մասին, ապա խնդրեք *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը* (Հրապարակում թիվ 05-10075-AM)

հպապարակումը, որը հասանելի է նաեւ մեր վեբ կայքում՝ ***www.socialsecurity.gov***:

Վերաքննում

Վերաքննումն իրենից ներկայացնում է ձեր պահանջի ամբողջական վերանայումը Սոցիալական ապահովության (կամ հաշմանդամության նահանգային ծառայություններում՝ եթե դուք բողոքարկում եք հաշմանդամության հետ կապված որոշում) այն անձի կողմից, որը չի մասնակցել առաջին որոշմանը: Անձը կուսումնասիրի առաջին որոշումը կայացնելու ժամանակ օգտագործած ապացույցները, ինչպես նաեւ բոլոր նոր ապացույցները:

Ձեր վերաքննման վերաբերյալ որոշում ընդունելիս, մեր կողմից ձեզ կուղարկվի որոշումը բացատրող գրություն:

Լսում

Եթե դուք համաձայն չեք վերաքննման որոշման հետ, ապա դուք կարող եք դիմել լսում անցկացնելու համար: Լսումը անցկացվելու է վարչական իրավունքի

դատավորի կողմից, որը չի մասնակցել առաջին որոշման կամ ձեր գործի վերաքննմանը:

Լսումը սովորաբար անցկացվում է ձեր տնից 75 մղոն հեռավորության սահմաններում: Վարչական դատարանի դատավորը ձեզ ծանուցելու է ձեր լսման ժամանակի եւ վայրի մասին:

Նախքան լսումը մենք կարող ենք ձեզ խնդրել, որպեսզի մեզ տրամադրեք լրացուցիչ ապացույցներ եւ պարզաբանեք ձեր հարցապնդման հետ կապված տեղեկատվությունը: Դուք կարող եք տեսնել ձեր գործում եղած փաստաթղթերը եւ տալ նոր տեղեկատվություն:

Լսման ժամանակ վարչական իրավունքի դատավորը հարցեր է տալու ձեզ եւ ձեր կողմից լսմանը բերված բոլոր վկաներին: Այլ վկաներ, ինչպիսիք են բժշկական կամ մասնագիտական փորձագետները, նույնպես կարող են լսման վերաբերյալ մեզ տեղեկատվություն տրամադրել: Դուք կամ ձեր ներկայացուցիչը կարող է հարցեր տալ վկաներին:

Որոշ դեպքերում մենք կարող ենք անցկացնել ձեր լսումը հեռուստատեսային խորհրդակցության միջոցով, այլ ոչ թե՝ անձամբ: Նման դեպքում մենք վաղօրոք տեղեկացնելու ենք: Կազմակերպելով հեռուստատեսային լսումներ, մենք կարող ենք լսումները ավելի հարմար դարձնել ձեզ համար: Հաճախակի հեռուստատեսային լսումով ելույթը կարող է նախատեսված լինել ավելի արագ, քան անձամբ արվող ելույթը: Հեռուստատեսային լսման վայրը

(շրջել)

կարող է նաեւ ավելի մոտ լինել ձեր տանը: Դա կարող է հեշտացնել ձեր վկաների կամ այլ մարդկանց կողմից ձեզ ուղեկցելու կազմակերպման գործը:

Սովորաբար, ներկա գտնվել լսմանը (անձամբ կամ հեռակոնֆերանսին) ձեր օգտին է: Դուք կամ ձեր ներկայացուցիչը (եթե այդպիսին կա) պետք է ներկայանաք լսմանը եւ բացատրեք ձեր գործը:

Եթե դուք չեք կարող կամ չեք ցանկանում ներկա գտնվել լսմանը, ապա հնարավորին սեղմ ժամկետում դուք պետք է գրավոր զգուշացնեք մեզ, թե ինչու: Եթե վարչական իրավունքի դատավորը չհամարի, որ ձեր ներկայությունը անհրաժեշտ է գործի հետ կապված որոշում կայացնելու համար, պահանջելով ձեր ներկա գտնվելը, ապա դուք չպետք է գնաք: Կամ էլ մենք կարող ենք այլ նախապատրաստումներ կատարել ձեզ համար, ինչպիսիք են ժամանակի կամ վայրի փոփոխումը: Մեր կողմից այլ նախապատրաստումներ անելու համար դուք պետք է ունենաք հարգելի պատճառ:

Լսումից հետո դատավորը ձեր գործով որոշում կկայացնի՝ հիմնվելով ձեր գործում եղած ամբողջ տեղեկատվության վրա, ներառյալ ձեր կողմից ներկայացված ցանկացած տեղեկատվություն: Մեր կողմից ձեզ կուղարկվի նամակ եւ վարչական իրավունքի դատավորի որոշման պատճենը:

Վերաքննում Վերաքննիչ խորհրդի կողմից

Եթե դուք համաձայն չեք վարչական դատավորի կողմից կայացած լսման որոշման հետ, ապա դուք կարող եք դիմել՝ Սոցիալական ապահովության վերաքննիչ խորհրդի կողմից այն վերանայելու խնդրանքով: Վերաքննիչ խորհուրդը դիտարկում է վերանայման

բոլոր խնդրանքները, սակայն այն կարող է մերժել խնդրանքը, եթե կարծում է, որ լսման որոշումը ճիշտ էր: Եթե Վերաքննիչ խորհուրդը որոշում է վերանայել ձեր գործը, ապա այն կամ ինքն է որոշում կայացնելու ձեր գործի վերաբերյալ կամ էլ կվերադարցնի այն վարչական իրավունքի դատավորին՝ հետագա վերանայման համար:

Եթե Վերաքննիչ խորհուրդը մերժում է ձեր խնդրանքը վերանայելու հարցում, ապա մեր կողմից ձեզ ուղարկվելու է մերժումը բացատրող նամակ: Եթե Վերաքննիչ խորհուրդը ինքնութույն է որոշում ձեր գործը, ապա մենք ձեզ ուղարկելու ենք որոշման պատճենը: Եթե Վերաքննիչ խորհուրդը վերադարձնի ձեր գործը Վարչական իրավունքի դատավորին, ապա մեր կողմից ձեզ կուղարկվի նամակ եւ հանձնարարականի օրինակը:

Դաշնային դատարան

Եթե դուք համաձայն չեք Վերաքննիչ խորհրդի որոշման հետ կամ, եթե Վերաքննիչ խորհուրդը որոշում է չվերանայել ձեր գործը, ապա դուք կարող եք հայցադիմում ներկայացնել շրջանի դաշնային դատարան: Վերաքննիչ խորհրդի գործողության մասին մեր կողմից ձեզ ուղարկվող գրությունում կասվի նաեւ, թե ինչպես դիմել դատարանին՝ ձեր գործը քննարկելու խնդրանքով:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10058-AM
Your Right To Question The Decision Made
On Your Claim (Armenian)
January 2011